



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՆԱԽԱԳԱՀ

«23» հոկտեմբերի 2019թ.

№ 216034-12

Հ Ր Ա Մ Ա Ն

ՍԱՐԳԻՍ ՆԻՅԱԶՅԱՆԻ ԵՎ ԿԱՐԵՆ ԲԵՍԱԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ  
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի թիվ 66/2019 եզրակացությունը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Ծառայողական կարգապահությունը խախտելու՝ «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները չկատարելու համար Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Արևելյան մաքսատուն-վարչության Բագրատաշենի մաքսային կետ-բաժնի 3-րդ բաժանմունքի մաքսային տեսուչներ Սարգիս Ալբերտի Նիյազյանի և Կարեն Հմայակի Բեսայանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:
2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Կարինե Գրիգորյանին՝ սույն հրամանը իրագրելու ողջ անձնակազմին:



Recoverable Signature

X

ԴԱՎԻԹ ԱՆԱՅԱՆ

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԴԱՎԻԹ ԱՆԱՅԱՆ



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ  
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ  
ԿՈՄԻՏԵ